

---

**ԲԱՅԱՍԵՌԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ  
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

**ՎԻԿՏՈՐՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Բայասեռը հայերենին բնորոշ է եղել նրա զարգացման բոլոր շրջաններում. քերականական այդ կարգը գոյություն ուներ դեռևս հնդեվրոպական նախալեզվում, կար նաև գրաբարում ու միջին հայերենում, սակայն բայական սեռը հաճախ ձևաբանական ցուցիչ չի ունենում և դրսևորվում է իմաստային-շարահյուսական հարաբերության միջոցով: Հր. Աճառյանը բայի սեռը քննելիս գրում է. «Հնդեվրոպական նախալեզուն էլ չգիտե զանազանել բայի սեռը. արմատը ինքնին չի կարող ցույց տալ, թե բայը ի՛նչ սեռ է. միևնույն արմատը և միևնույն բունը թե՛ ներգործական, թե՛ չեզոք և թե՛ կրավորակերպ է միանգամայն»<sup>1</sup>: Խոսքը բայասեռի արտահայտության ձևի մասին է, քանի որ իմաստային-քերականական առումով սեռի դրսևորում եղել է: Այդ մասին Հր. Աճառյանը նշում է. «Հնդեվրոպական նախալեզուն ճանաչում է երկու սեռի բայ՝ ներգործական և հասարակ: Հասարակ կոչվում է այն բայը, որ ցույց է տալիս, թե գործող անձը գործողությունը կատարում է իրեն համար, մինչդեռ ներգործականը այս նրբությունը չունի»<sup>2</sup>: Սակայն հնդեվրոպական նախալեզվում, ինչպես նշում է Հր. Աճառյանը, սեռային ցուցիչ կրավորականի համար այնուամենայնիվ եղել է. «Գալով կրավորականին, նոր քննությունները ցույց են տալիս, որ հնդեվրոպական նախալեզուն թեև ուներ նախապես բայի այդ սեռը, որ կազմվում էր r-ով (ինչպես ցույց են տալիս կամիս., թոխար. և լտ.), բայց հետո շատ լեզուներ ջնջեցին. սրանց մեջ տիրապետեց ներգործականի գաղափարը»<sup>3</sup>:

Հնդեվրոպական տարբեր լեզուներում բայասեռի զարգացումը տարբեր ձևերով է ընթացել: Հայերենի տարբեր փուլերում էլ ինչպես քերականական շատ իրողություններ, այնպես էլ բայասեռի կարգը փոփոխություններ է կրել, որոնք առնչվում են թե՛ խոնարհման առանձնահատկություններին, թե՛ սեռի ձևային ցուցիչներին, թե՛ սեռային անցումներին և թե՛ կրկնասեռության դրսևորմանը: Այս ամենով հանդերձ՝ բայասեռի դրսևորում միշտ եղել է: «Հայերենում բայերը իրենց զար-

---

<sup>1</sup> Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. 4, Ա գիրք, Եր., 1959, էջ 79:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 80:

զացման բոլոր շրջաններում ունեցել են սեռեր, որոնք գրաբարի ոչ բոլոր ժամանակներում են ունեցել հատուկ վերջավորություններ»<sup>4</sup>, - գրում է Ս. Ղազարյանը: Նշենք նաև, որ հայ քերականագիտության մեջ գործածվել են *տրամադրություն* և *սեռ* տերմինները, որոնցից առաջինը հունարենից, իսկ երկրորդը լատիներենից թարգմանությունն է: Այս երկուսից տարածում է ստացել *սեռ*-ը: *Կրավորական* սեռը բնորոշելու համար կիրառվել են նաև *կրական* և *կիր* տերմինները (Ստեփանոս Մունեցի, Դավիթ)<sup>5</sup>:

Եթե ընդհանուր գծերով բնութագրենք բայասեռի դրսևորումը գրաբարում, կարող ենք նշել, որ իմաստակիրառական տարբերակումից բացի, կամ դրան զուգահեռ՝ բայասեռը ինչ-որ չափով դրսևորվում էր նաև տարբեր լծորդություններով բայերի խոնարհման միջոցով, թեև խոնարհման առանձնահատկություններն ամբողջապես սեռը տարբերելու հնարավորություն չէին ստեղծում: Գրաբարում տարբեր լծորդությունների բայերի համար առանձնացվում են *ներգործած* և *կրավորած* խոնարհումներ, սակայն, չնայած այս անվանումներին, խոնարհման ձևերը բայասեռի արտահայտության ցուցիչ չեն դառնում, թեև կան որոշ համընկնումներ:

Այսպես՝ *ա* և *առ* լծորդությունների բայերի դեպքում առհասարակ որևէ ձևային տարբերակում չի եղել ներգործական և կրավորական սեռերի բայերի միջև, այսինքն՝ միևնույն բայը կարող էր արտահայտել և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի իմաստ: Թե տվյալ կիրառությունում որ սեռն էր արտահայտվում, պայմանավորված էր նախադասության արտահայտած մտքով, նախադասության անդամների շարադասությամբ:

Ե լծորդության բայերի դեպքում կրավորածն խոնարհվելիս *է* լծորդը փոխվում էր *ի*-ի, իսկ *ի* լծորդության բայերի դեպքում այն մնում էր նույնը, այսինքն՝ որևէ ձևային փոփոխություն չէր լինում: Կրավորածն խոնարհված բայերը հիմնականում կրավորական սեռի իմաստ էին արտահայտում: Այսինքն՝ որոշ դեպքերում ներգործածն ու կրավորածն խոնարհումները համընկնում էին բայի սեռին, իսկ որոշ դեպքերում՝ ոչ:

Այս հարցի վերաբերյալ որոշ քերականներ (Ս. Ջուղայեցի, Կ. Գալանոս, Մ. Սեբաստացի և այլք) այն կարծիքն են հայտնել, որ բոլոր լծորդությունների բայերը, ստանալով *-իմ* վերջավորությունը, կարող են ներգործականից փոխվել կրավորականի, և չեն առանձնացրել *ա* և *առ* լծորդությունների բայերը<sup>6</sup>:

<sup>4</sup> Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1981, էջ 251:

<sup>5</sup> Մանրամասն տե՛ս Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), Եր., 1954:

<sup>6</sup> Մանրամասն տե՛ս Գ. Ջահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Եր., 1974:

Բայի կրավորական սեռի քերականական կարգի դրսևորումը, ինչպես նշվեց, եղել է դեռևս հնդեվրոպական նախալեզվում, սակայն, ինչպես հայտնի է մեզ ավանդված գրավոր աղբյուրներից, այն գրաբարյան շրջանում որոշակի ձևային դրսևորում չի ունեցել և միայն որոշ դեպքերում համընկել է կրավորաձև խոնարհմանը: Գրաբարում մի շարք բայեր ընդհանուր ձևով արտահայտել են և՛ անցողականություն, և՛ անանցողականություն: Այդ տիպի բայերը համարվում են *հասարակ* կամ *հասարակ սեռի* բայեր: Այդպիսի բայերից են *սկսանել, տանել, հաւանել* և այլն: Ա. Աբրահամյանը, քննելով գրաբարյան բայասեռը, գրում է. «Գրաբարում կան մի շարք բայեր, որոնք ընդհանուր ձևով արտահայտում են և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի իմաստ: Դրանք կոչվում են հասարակ (ընդհանուր) բայեր: Այդպիսի բայերը կարող են դրսևորել մի դեպքում ներգործական, մի այլ դեպքում կրավորական սեռի իմաստ՝ առանց ձևային փոփոխության, օրինակ՝ *Մայր ծնաւ գորդի* «մայրը ծնեց որդուն», *Որդի ծնաւ ի մորէ* «որդին ծնվեց մորից»: Կրավորական սեռի առանձին, յուրահատուկ բայեր չկան, դրանք ստացվում են ներգործական սեռի բայերից՝ ըստ կիրառության կրելով ձևային զանազան փոփոխություններ և որոշ դեպքերում էլ առանց այդպիսի փոփոխությունների»<sup>7</sup>: Ըստ Ա. Աբրահամյանի՝ հասարակ բայերն ավելի շատ կիրառվում են որպես ներգործական, իսկ ավելի քիչ՝ կրավորական իմաստով: Նա ընդունում է բայի երեք սեռ և դրանք տարբերելու համար հիմք է ընդունում բայի իմաստը:

Վ. Առաքելյանը *ի լծորդության* բայերի սեռի դրսևորումը գրաբարում այսպես է ներկայացնում. «Դասական հայերենի *ի* խոնարհման բայերը երկու սեռով են գործածւում՝ չէզոք և ներգործական: Բայց կան նաև եռասեռ բայեր: Օրինակ, *ծնանիմ* նշանակում է «ծնում եմ», «ծնում եմ», «ինձ ծնում են»<sup>8</sup>: Այսպիսի բայերի սեռի որոշման համար մեծ դեր ունի նախադասության շարադասությունը. փոխելով այն՝ մենք կարող ենք փոխել բայի սեռը:

Ինչպես տեսնում ենք, կարծիքները տարբեր են, և դա պայմանավորված է նրանով, որ գրաբարում սեռի դրսևորումը անմիօրինակ էր: Եթե ներկայի հիմքից կազմվող ժամանակներում (ներկա, անցյալ անկատար, ստորադասական եղանակի առաջին ապառնի, հրամայական եղանակի արգելական հրամայական) *է* լծորդության ներգործական սեռի բայերի *է* լծորդը փոխվում է *ի*-ի (*ա* և *ու* լծորդության բայերի դեպքում փոփոխություն չի լինում), ապա «կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում՝ սահմանական եղանակի անցյալ կատարյալ, ստորադասական երկրորդ ապառնի, բուն հրամայական, ներգործական և կրավորական սեռերի իմաստն արտահայտելու համար հին հայերենում ստեղծվել էր վերջավորությունների հատուկ հակադրություն՝

<sup>7</sup> Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 96:

<sup>8</sup> Վ. Առաքելյան, Գրաբարի քերականություն, Եր., 2010, էջ 141:

ներգործակերպ և կրավորակերպ: Սակայն արդեն 5-րդ դարում այս հակադրությունը կորցրել էր իր կերպասեռային իմաստը, որովհետև *ի* լծորդության բոլոր բայերը անկախ սեռից խոնարհվում էին միայն կրավորաձև. դրանք կրավորակերպ խոնարհման վերջավորություններով արտահայտում էին երկու սեռերի իմաստներ՝ *դասեցաւ - դասեց* և *դասովեց*: Միայն ներգործակերպ խոնարհում ունեցող բայերը կարող էին ըստ սեռային անհրաժեշտության փոխել իրենց խոնարհման վերջավորությունները՝ *սիրեաց-սիրեց, սիրեցաւ-սիրվեց...*<sup>9</sup>:

Գրաբարում կրավորական սեռի իմաստն արտահայտվում էր նաև *իւր* վերջնամասնիկով, որը կցվում էր միայն եզակի երրորդ դեմքին. «Ե լծորդության բայերն անցյալ անկատարի եզակի 3-րդ դեմքում երբեմն ունենում են *իւր* վերջավորությունը կրավորականի իմաստով՝ *կոչիւր «կոչվում էր», գտանիւր «գտնվում էր»*<sup>10</sup>:

Կրավորական սեռի տարբերակման այս ձևերը հստակ չէին, որը լեզվի զարգացման ընթացքում առաջ էր բերում սեռային տարբերակման ցուցիչի ստեղծման անհրաժեշտություն: Դրա ստեղծումով աշխարհագրաբար բավականին հստակ է դառնում բայական սեռերի տարբերակումը, թեև լիակատար միօրինակության չի հասնում:

Կրավորական սեռի տարբերակումը սկսում է ավելի հստակ դառնալ միջինհայերենյան շրջանում, երբ իբրև կրավորականի ցուցիչ աստիճանաբար սկսում է գործածվել *ու/ւ/վ* ածանցը, որը դրվում է բայահիմքի և դերբայական վերջավորության միջև: Ս. Ղազարյանը այս հարցի մասին գրում է. «Միջին հայերենում կրավորական սեռը նշելու համար ստեղծվել է առանձին ածանց՝ *ու, վ, լ*, որը պահպանվել է նաև ժամանակակից հայերենում: Բացի կրավորական սեռը ցույց տվող ձևից միջին հայերենում տարբերություն է դրվել նաև ներգործական և չեզոք բայերի միջև. ներգործական բայերը ունեցել են *ել*, իսկ չեզոք բայերը *իլ* վերջավորություն, ինչպես *բաժնեւ-բաժնիւ, մարեւ-մարիւ*՝ և այլն: Այս տարբերակումը սակայն չի տարածվել և մնացել է իբրև եզակի երևույթ»<sup>11</sup>:

Ս. Անթոսյանը միջին հայերենում կրավորականի դրսևորման վերաբերյալ հետևյալն է գրում. «Գրաբարում, ինչպես հայտնի է, բայը չունեք կրավորականի դրսևորման մի յուրահատուկ ընդհանուր ձև. *ի* կրավորակերպ խոնարհումը, նույնիսկ ոչ լիովին, կիրառելի էր միայն *է* խոնարհման բայերի համար, ուստի հենց V դարից սկսած ստեղծվել են նորահնար ձևեր: Միջին հայերենի շրջանում կրավորականը դրսևորման հատուկ ձև է ստանում: Ճիշտ է, գրողները հաճախ օգտագործում են նաև գրաբարյան կրավորակերպ ձևեր, սակայն իշխողը նորն է»<sup>12</sup>:

<sup>9</sup> Ա. Աբաջյան, Ն. Դիրբարյան, Ա. Յուզբաշյան, Հայոց լեզվի պատմություն, Եր., 2017, էջ 282-283:

<sup>10</sup> Ն. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, Գրաբարի ձևաբանություն, Եր., 1976, էջ 20:

<sup>11</sup> Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 251-252:

<sup>12</sup> «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Եր., 1972, էջ 302:

Այսպիսով՝ կրավորական սեռի ձևաբանական ցուցիչի կիրառումը որոշակիորեն հստակեցնում էր բայասեռի դրսևորումը, հեշտացնում սեռերի տարբերակումը: Ձևաբանորեն տարբերակված սեռ ունեցող բայի միջոցով ավելի հեշտ են ընկալվում ենթակայի և կրող առարկաների հարաբերությունները, որոնք ընկած են բայասեռի հիմքում, և շարադասական փոփոխությունները, իմաստային անհստակությունները էապես չեն ազդում սեռի որոշման վրա: Կրավորական սեռի ցուցիչի ի հայտ գալով՝ մեծապես կայունացավ սեռային տարբերակման հարցը, սակայն լեզվի պատմության ուսումնասիրման տեսակետից առաջ եկավ մի նոր հարց. ի՞նչ ծագում ունի կրավորական սեռի ցուցիչ *ւ/*-ն: Այս հարցի վերաբերյալ կարծիքները տարբեր են:

Հ. Պետերմանը, Հ. Հյուբշմանը և Յ. Կարստը այն կարծիքին էին, որ կրավորականի *ւ/* ածանցն առաջացել է *ու* լծորդության բայերի համապատասխան լծորդից, «...*ու/ւ/* ածանցը ծագում է *ու* լծորդից, կրավորական դարձնելու համար դրանց հիմքին ավելանում էր *ի* լծորդը՝ *թոդուլ-թոդուիլ, զենուլ-զենուիլ*: Այս *ուիլ* նորակազմության մեջ *ու*-ն սկսում է ըմբռնվել որպես նոր կրավորական: Սկզբում առաջանալով միայն *ու* լծորդության բայերի դեպքում՝ այն աստիճանաբար տարածվում է մնացած լծորդությունների վրա»<sup>13</sup>:

Ըստ Ա. Այտընյանի և Ստ. Պալասանյանի՝ կրավորական *ու/ւ/* մասնիկը ծագել է *ուած* ածանցից: Այս տեսակետի կողմնակից է նաև Ա. Աբրահամյանը: Նա նշում է, որ *ւ/* բայական ածանցը՝ որպես կրավորական սեռի ցուցիչ, գրաբարի բայական համակարգում չի եղել: Այն հատուկ է եղել միջին հայերենին, բարբառներին ու աշխարհաբարին: Որպես ժամանակակից հայերենի տարրերից մեկը՝ *ւ/* ածանցը գալիս է հնագույն ժամանակներից: Այն սաղմնային ձևով գոյություն է ունեցել գրաբարի առանձին բառաձևերում, որոնք ժամանակի ընթացքում բայացման գործընթաց ապրեցին: Նկատի են առնվում *-ուած* մասնիկ ունեցող բառերը, ինչպես՝ *այրեցուած, անկուած, ասացուած*<sup>14</sup>:

Ա. Աբրահամյանը նշում է նաև, որ *-ուած* մասնիկը կազմված է *ու* և *ած* մասնիկներից, որոնցից *ած*-ը դերբայական մասնիկ է, իսկ *ու*-ն կրավորական *ւ/* ածանցն է սաղմնային վիճակում, որը հնչունափոխության հետևանքով *ա* ձայնավորից առաջ վերածվել է *ւ/*-ի:

Միջին հայերենում կրավորականի *ւ/*-ի կիրառությունը սկսում է ամրապնդվել, թեև գործածվում են նաև գրաբարյան ձևեր: Ս. Անթոսյանը գրում է. «*-ուիլ* կրավորականն, անշուշտ, իր սկիզբն է առնում հին հայերենի *դարձուած, յորինուած, շինուած* բառաձևերում եղած *ու(ած)* մասնիկ-վերջավորությունից: Թվում է, թե սա միակ հնարավոր ու ճիշտ ձևն է, որ հետագայում առավել ևս պարզություն մտցրեց բայի խոնարհման համակարգում: Միջին հայերենով գրող հեղինակի լեզ-

<sup>13</sup> Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաջյան, նշվ. աշխ., էջ 283:

<sup>14</sup> Տե՛ս Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Գիրք Ա, Եր., 1962, էջ 619:

վամտածողությանը գրաբարյան ձևերը հարազատ չէին, այլ պարզապես սովորույթի ուժով էին օգտագործվում, այլապես ինչո՞վ բացատրել այն երևույթը, որ գրաբարի՝ կրավորական իմաստի բայաձևերն ունենում են *–ի/իչ* վերջավորություն»<sup>15</sup>:

Այսպիսով՝ միջին հայերենում աստիճանաբար ամրապնդվում է *վ* ածանցի կիրառությունը, սակայն բայի սեռերի տարբերակման համար այնուամենայնիվ կարևոր է մնում նաև իմաստային-շարահյուսական կիրառությունը: Ժամանակակից հայերենում ներգործական, կրավորական և չեզոք սեռերի բայերը փաստորեն տարբերակվում են մի քանի իրողության հիման վրա: Միայն ձևաբանական ցուցիչի միջոցով մասամբ է հնարավոր զանազանել տարբեր սեռերի բայերը: Այսպես ներգործական բայերի մեջ պարտադիր չկա *վ* ածանցը, կրավորական բայերի մեջ պարտադիր կա *վ* ածանցը, իսկ չեզոք բայերի մեջ այն կարող է լինել կամ չլինել: Այսինքն՝ միայն ձևային առումով չեն տարբերակվի ներգործական բայերը և *վ* ածանց չունեցող չեզոք բայերը, ինչպես նաև կրավորական բայերը և *վ* ածանց ունեցող չեզոք բայերը, քանի որ կա երեք սեռ, բայց միայն մեկ ձևային ցուցիչ: Նշենք նաև, որ միևնույն բայը, նույն ձևն ունենալով, տարբեր կապակցություններում տարբեր սեռեր կարող է դրսևորել. *հմտտ. Քարը շարժվեց հարվածից* (կրավորական) և *Նա նստած տեղում շարժվեց* (չեզոք):

Այս մասին գրել է դեռևս Ա. Այտրնյանը. «Կրաւորական բայն որ ըստ ինքեան ուրիշէն կրել մը կը ցուցնէ, շատ անգամ պարզապէս չեզոքի տեղ կը գործածուի»<sup>16</sup>: Ըստ էության, ժամանակակից արևելահայերենում չեզոք սեռի բայերի մեջ հնարավոր է առանձնացնել չորս խումբ, որոնք ունեն *վ* ածանցը: Մի խմբում այն բայերն են, որոնց սեռը հնարավոր է որոշել կապակցության մեջ, ինչպես վերը բերված օրինակում: Երկրորդ խմբում այն բայերն են, որոնց կազմում *վ*-ն միշտ կա, բայց սեռային ցուցիչ չէ (օր.՝ *գժվել*), երրորդ խմբում «անդրադարձ» կոչվող բայերն են (օր.՝ *լվացվել*), չորրորդ խմբում «փոխադարձ» կոչվող բայերն են (օր.՝ *բախվել*): Այս բայերին և ընդհանրապես բայասեռին առնչվող շատ հարցերի չենք անդրադառնում, քանի որ այստեղ մեր նպատակը միայն սեռի դրսևորման հնարավոր ձևերը ներկայացնելն է, ուստի ամփոփենք հետևյալով:

Հնդեվրոպական նախալեզվից ժառանգելով բայասեռը՝ հայերենը երկար ժամանակ այն չի տարբերակել ձևային ցուցիչներով: Գրաբարում խոնարհման որոշ վերջավորություններով հնարավոր էր արտահայտել կրավորական սեռի իմաստ, սակայն սեռային տարբերակման հիմքը գլխավորապես իմաստային-կիրառական սկզբունքն էր: Միջին հայերենում որպես կրավորական սեռի ցուցիչ գործածական դարձավ

<sup>15</sup> «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», էջ 302:

<sup>16</sup> Ա. Այտրնյան, Քննական քերականությունն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Եր., 1987, էջ 206-207:

նւ/ւ/ւ ածանցը, որը շարունակեց այդ գործառույթով գործածվել նաև աշխարհաբարում, սակայն ժամանակակից արևելահայերենում էլ բայասեռի որոշման հարցում, կրավորական *ւ* ցուցիչից բացի, կարևոր դեր է կատարում իմաստային-կիրառական հիմունքը, քանի որ թե՛ սեռային ցուցիչ չունեցող, թե՛ ունեցող բայերը կարող են տարբեր սեռերի լինել՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով: Քանի որ ձևային ցուցիչը մեկն է (*ւ*), իսկ սեռերը՝ երեքը, բայասեռը որոշելու համար հաշվի են առնվում մի քանի հիմունքներ՝ սեռային ցուցիչը, բառիմաստը, շարահյուսական կիրառությունը, տարբեր, մասնավորապես՝ ուղիղ և ներգործող խնդիր լրացումներ ստանալու հնարավորությունը:

**Քանալի բառեր** – *սեռի ցուցիչ, բառիմաստ, բայասեռ, արևելահայերեն, վ ածանց, ներգործական սեռ, չեզոք սեռ, քերականություն*

**ВИКТОРИЯ МУРАДЯН – *Формы и способы выражения залога в армянском языке.*** – Категорию залога армянский язык унаследовал от индоевропейского праязыка, однако длительное время её формальное выражение оставалось нечётким. В грабаре при спряжении возможно было выразить значения страдательного залога личным окончанием. В среднеармянском значение страдательного залога стал выражать суффикс *նւ/ւ/ւ*, который сохранился и в современном армянском, хотя в восточноармянском языке страдательный залог определяется не только суффиксом *ւ*, но в значительной мере также семантикой и синтаксической структурой предложения.

**Ключевые слова:** *показатели залога, семантика слова, категория залога, восточноармянский язык, суффикс *ւ*, действительный залог, нейтральный залог, грамматика*

**VIKTORIYA MURADYAN – *The Ways and Methods of Expressing Voice in Armenian.*** – Inheriting voice from Indo-European parent language, Armenian hasn't differentiated it with morphological indicators for a long time. In Old Armenian, it was possible to express the meaning of passive voice with some declination endings. In Middle Armenian the *նւ/ւ/ւ* affix was generally used as a passive voice indicator, which continued to be used in that function in New Armenian as well, however in Modern Eastern Armenian while defining the voice, besides 'ւ' passive indicator, the semantics and the syntactic structure of the sentence also play a significant role.

Several bases are concerned while defining the voice – morphological indicator, word-meaning, syntax application, the possibility of getting different, especially direct and indirect objects.

**Key words:** *gender indicator, word-meaning, voice, Eastern Armenian, 'ւ' affix, active voice, middle voice, grammar*